ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021 թվականի հոկտեմբերի 15-ից նոյեմբերի 7-ը Իտալիայի Տուշայի համալսարան գործուղման արդյունքների մասին

1. ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ

Դավիթ Պիպոյան

2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆ

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ դասախոս

3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Իտալիա (Վիտերբո).

- Իտալիայի Տուշայի համալսարան

2021 թվականի հոկտեմբերի 15-ից նոյեմբերի 7-ը

4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

Իտալիայի Տուշայի համալսարան

5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Նպատակը Էրազմուս պլյուս KA 107 ծրագրի շրջանակում որպես դասավանդող անձնակազմ մասնակցել ծրագրին: Այցի հիմնական նպատական էր ուսանողներին տրամադրել անգլերեն լեզվով դասախոսություններ: Իտալիայի Տուշայի համալսարանի պրոֆեսոր և ծրագրի ակադեմիական համակորգող Նիկոլո Մերեդինոյի հետ Տուշայի համալսարանի ուսանողներին ներկայացրել ենք Մենվիպրո ծրագրի շրջանակում մշակված սննդամթերքի անվտանգության ռիսկի գնահատում մոդուլը:

6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

Հանդես եմ եկել մի շարք դասախոսություններով, ինչպես նաև մասնակցել եմ Էրազմուսի տեղեկատվական օրերի ընթացքում կազմակերպված միջոցառումներին, որտեղ ներկայացրել եմ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ի հետ համատեղ իրականացվող ծրագրերը, ուսանողների համար առկա հնարավորությունները: Տեղեկատվական օրերի ընթացքում ներկայացրել եմ Հայաստանը, ՀՀ ԳԱԱ

Էկոկենտրոնում տեղակայացված բնապահպանության և բնօգտագործման ամբիոնի ընձեռած հնարավորությունները, Մենվիպրո ծրագրի շրջանակում հիմնված ԷՌԼԵՓ լաբորատորիան և Տուշայի համալսարանի ուսանողներին առաջարկել եմ օգտվել նշված հնարավորություններից, նշելով որ չնայած լաբորատորիան տարածաշրջանային նշանակություն ունի, փոխանակման ծրագրերի շրջանակում Եվրոպական ուսանողները ևս կարող են օգտվել լաբորատորիայի հնարավորություններից և իրականացնեն հետազոտական թեզեր:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Այցի ընթացքում գիտակրթական գործունեությունից բացի, Տուշայի համալսարանի արտաքին կապերի դեպարտամենտում մասնակցել եմ մի շարք քննարկումների, որոնք վերաբերում են շարժունության ծրագրերի արդյունավետության բարձրացմանը, համատեղ մագիստրոսական ծրագրերին և հետագա համագործակցության ընդլայնմանը:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ՀԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Որպես ծրագրի համակարգող խնդրել եմ Տուշայի համալսարանին որ ԳԿՄԿ-ին տրամադրեն թույլտվություն հեռարձակվող դասերին մասնակցելու համար, մասնավորապես իտալարեն լեզվի դասերը կարևոր կլինեն կրկնակի դիպլոմի ծրագրերի իրականացման համար:

10. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

ԴԱՎԻԹ ՊԻՊՈՅԱՆ

09.11.2021